2019 թվականի ապրիլի 5-ին, Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախքի և Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդությունում հանդիսավորապես տեղի ունեցավ առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տեր Մաղաքիա վարդապետ Ամիրյանի բարիգալստյան հանդիսությունը: Հանդիպումը տեղի ունեցավ ջերմ և սիրո մթնոլորտում, որը ցույց է տալիս եկեղեցու, ժողովրդի, ղեկավարության և հասարակության միասնությունը, որը ձևավորվել է թեմական առաջնորդի, հոգևոր դասի և պաշտոնեության միասնական աշխատանքի շնորհիվ:

Հանդիսավոր արարողությանը իրենց մասնակցությունն էին բերել առաջնորդական փոխանորդության հոգևոր դասը, Ախալքալաքի քաղաքապետ Յուրիկ Ունանյանը և շրջանային ժողովի նախագահ Նաիրի Իրիցյանը, Նինոծմինդայի քաղաքապետ Անիվարդ Մոսոյանը և շրջանային ժողովի նախագահ Սմբատ Կյուրեղյանը, Ախալցիխեի շրջանային ժողովի պատգամավոր Համբարձում Բաբոյանը,

շրջանային վարչության սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի ղեկավար Ռուբեն Կարապետյանը, Ախալքալաքի, Ախալցիխեի, Նինոծմինդայի, Ասպինձայի տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները, մտավորականներ, հասարակական գործիչներ, փոխանորդության պաշտոնեությունն ու կրթամշակութային կենտրոնների տնօրենները:

Իր ներկայությամբ ընդունելությունը պատվել էր ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը:

Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Հենզել Մկոյանն ու Սամվել Մանուկյանը Թբիլիսիում գտնվելու պատճառով չէին ներկայացել, բայց իրենց ողջույնի և շնորհավորանքի խոսքերն էին փոխանցել նորանշանակ առաջնորդին: Թեմական առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը հյուրերին ներկայացրեց նորանշանակ փոխանորդ Հոգեշնորհ Տեր Մաղաքիա վարդապետ Ամիրյանին, ով պատվավոր պաշտոնը ստանձնում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնությամբ, նաև հավաքվածներին փոխանցեց Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու սերը և նշեց, որ ջավախահայությունը մշտապես Վեհափառ Հայրապետի խնամքի և ուշադրության կենտրոնում է: Այնուհետև Վազգեն Սրբազանը հավաքվածներին ներկայացրեց Հայր Սուրբի անցած հոգևոր գործունեությունն ու կրթական ուղղին և նրան բնորոշեց որպես գործունյա, պատասխանատու և ծառայասեր հոգևորականի, մաղթեց հաջողություններ առաջնորդական փոխանորդի պատվավոր առաքելության մեջ:

Սրբազան Հայրն իր գնահատանքը հղեց երկարամյա փոխառաջնորդ Հոգեշնորհ Տեր Բաբգէն վարդապետ Սալբիյանին, ով իր ծառայությունը փոխառաջնորդությունում իրականացրեց դժվար ժամանակահատվածում:

Թեմական առաջնորդը նաև իր օրհնությունը փոխանցեց ղեկավարությանը, հոգևոր դասին և մտավորականներին, հասարակական գործիչներին, ովքեր աջակցել են փոխանորդության կայացմանը և աշխատանքների իրականացմանը:

Այնուհետև Հոգեշնորհ Տեր Մաղաքիան իր որդիական երախտագիտությունը հայտնեց Ամենայն Հայոց Հայրապետին՝ սույն ծառայությունը վստահելու համար, ինչպես նաև շնորհակալություն հայտնեց թեմական առաջնորդին և հոգևոր դասին ջերմ ընդունելության համար: Նա նաև ողջունեց ներկաներին և համոզվածություն հայտնեց, որ միասնական ուժով կկարողանան իրականություն դարձնել ջավախահայության հոգևոր կյանքի

վերազարթոնքի երազանքն ու տեսիլքները:

Ապա խոսքով հանդես եկան ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանն ու Նինոծմինդայի Ռաֆայել-Ձավախ կրթամշակութային և երիտասարդական կենտրոնի տնօրեն Ժորա Սնխչյանը: Նրանք շնորհավորեցին Հոգեշնորհ Հայր Սուրբին և համոզմունք հայտնեցին, որ Ձավախքում հոգևոր առումով իսկապես կլինի վերազարթոնք: